

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.01.2022



Սիրելի՛ հայրենակիցներ

Սիրելի՛ զինվորներ ու սպաներ, Արցախյան երեք պատերազմների մասնակիցներ, կամավորականներ, Սյունիքի «Երկրապահ ԿՄ» անդամներ

Հայոց բանակի կազմավորման 30-ամյակն ենք տոնում այսօր, եւ շնորհավորում եմ բոլորիս՝ մեր պետական տոնացույցում հիրավի ամենակարեւոր տոներից մեկի ու արժեքավոր օրվա կապակցությամբ:

Մեկական զինված ուժերը նորանկախ Հայաստանի համար դարձան մեր պետության սահմանների ամրության ու հաղթանակների գրավականը, հետագա ինքնիշխանության խորհրդանիշն ու երաշխավորը:

Այսօր՝ 2020-ի պատերազմից հետո ու շարունակվող լարվածության պայմաններում, վիրավոր ենք, բայց ոչ թեւաթափ ու կոտորված ոգով. դրա իրավունքն ու ժամանակը մենք չունենք... Ուստի, ոտքի կանգնելու եւ առաջ գնալու ճանապարհին ամենքս, նախեւառաջ, պետք է նեցուկ լինենք Հայոց բանակին...

Հունվարի 28-ի տոնին մեր խոնարհումն ու շնորհակալանքի խոսքը՝ նախեւառաջ բանակի կայացման ու պետականության պահպանման ճանապարհին նահատակված հայորդիների հիշատակին, նրանցից յուրաքանչյուրի կյանքն ու ծառայությունը դրոշմված է մեր բանակի պատմության էջերին:

Մեր երախտագիտությունը նաեւ ՀՀ զինված ուժերի կազմավորման ու կայացման ակունքներում կանգնած նվիրյալներին՝ Վազգեն Սպարապետից մինչեւ շարքային զինվոր ու կամավորական:

Ես հավատում եմ, որ Հայոց բանակն այդ էջերին փառքով ու պատվով գրվելիք դեռ շատ էջեր կունենա, ես հավատում եմ գալիք հաղթանակներին, հայ զինվորի բազկի, հայ զորականի մտքի ուժին: Դրա համար այսօր մեր բանակին նաեւ ամուր թիկունք է պետք, որի համար պատասխանատու ենք յուրաքանչյուրս՝ մեր աշխատանքով, վարքով, հայրենասիրությամբ, միասնականությամբ, Հայաստանին անդավաճան նվիրումով: Խաղաղ, անփորձանք ծառայություն եմ մաղթում այսօր սահման պահող մեր զինվորներին ու սպաներին: Ո՛ւժ, ամուր կամք, արիություն ու բարձր մարտունակություն ձեզ:

Շնորհավոր՛ր տոնդ, Հայո՛ց բանակ: